

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 ուղարկոյ համար
 Տարեկան 10 Յր.
 Վեցամսեայ 5 »
 Սրտասահմանի հա-
 մար Տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 Անկերկայի համար
 Տարեկան 2.50 ՏՊ.
 Վեցամսեայ 1.25 »
 ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐՆԷԼԻ
 —(—)
 Երանցունակ տղոց 20 սան-
 քիւն է. երեքեկ աւելի աւ-
 ցաւնեալ համար 20 ՕԼՈ
 գեղջ կըրոյ :

ՇՆԱԲԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇՆԱԲԹ ՕՐԵՐԸ

Նախակ և Գրաս զրկել
 Խմբագրութեան հասցիին
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Դրոսիւնի և չեմ տրուի

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ԱՆՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՍԵՐ ՀՈԳԵՒՈՐԱ-ԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Բ.

Ինչպէս ամէն կաղնակեայ պու-
 թիւն, մեր եկեղեցին ալ ունի
 իր սահմանուած որոշ կանոններն
 ու պատիժները. բայց ի՞նչ է
 պատճառը որ, մեր շուրջը վրա-
 տացող անկարգ կարգաւորները
 անպատիժ և սանձարձակ կը մնան:

Էջմիածնի մէջ Սինոդ և Պօլսի
 մէջ Կրօնական Ժողով մը ունինք,
 որոնք վերին հսկող և տնօրինող
 մարմիններ են. անդին վանքեր
 և անապատներ ալ կան, բայց
 ո՛ր է պատժուողը կամ ապաշ-
 խարողը:

Կրօնական իմ որ մեր եկեղեցա-
 կան վերին մարմինները շատ
 թոյլ են և շատ աշտու իրենց
 մէջ պաշտօնակիցը պատժելու, և
 աւելի տիրող կառավարութեանց
 ձեռքը գործիք կը դառնան, ար-
 ժանաւորները և անմեղները զո-
 հելու քաղաքական շահերու:

Բայց եթէ քիչ մը խոր կերպով
 ուսումնասիրենք մեր բարոյական
 վիճակը, բոլոր մեղքը Սինոդի
 մը և կամ Կրօն. Ժողովի մը վրայ
 չպիտի բարդենք. ամէնէն մեծ
 պատասխանատուութիւնը ուղղակի
 ժողովուրդի վրայ է որ կը ծան-
 րանայ:

Ուր որ յանցապարտ եկեղեցա-
 կան մը և անոր գէժ բողոքող մաս
 մը կայ, հոն չեն պակասի նաեւ
 այնպիսիներ, որոնք իրենց բո-
 լոր ջանքը կը նուիրեն մեղաւորը
 արդարացնելու. տեղէ մը վերը-
 տուածը ուրիշ տեղէ մը գրկաբաց
 կընդունուի, և հակընդդէմ տեղե-
 կագիրներու տեղատարափին առ-
 ջել և շատ անգամ գատող մարմին-
 ներն ալ շուարած կը մնան:

Հոս պէտք է յիշել նաեւ որ
 յանցապարտ եկեղեցականն ալ
 իր նեղ օրերուն մէջ անգործ չի
 նստիր. գառնուկի զգեստ հա-
 զած, արցունքը աչքերուն մէջ
 տունէ տուն, խանութէ խանութ
 կը պտըտի, և շատ անգամ միա-
 միտ մարդոց պաշտպանութիւնովը
 կը յաջողի իւղի պէս ջուրին ե-
 րեսը ելլել:

Քանի մը օրինակ մեր շատ մօ-

տերէն. Ամիսներ առաջ Վառնայի
 թաղ. Խորհուրդն եկեղեցիին քա-
 հանանքէն մէկը պաշտօնանկ ը-
 րաւ իր անվայել ընթացքին հա-
 մար. օրեր վերջը սակայն ժո-
 ղովրդային ճնշումի առկա ստիպ-
 ուեցաւ վերընդունել: Ինչո՞ւ.
 «անուշ ձայնով աւետարան կը
 կարդայ եղբր», և մինչեւ այսօր
 ստիպուած ենք այդ քահանային
 պատճառած գլուխցատութիւնները
 տանիլ:

Շուրջայի քահանայի մասին
 հրէշային բաներ պատմուեցան,
 և մինչ կը սպասէինք որ կարգա-
 ղուրկ ըլլար աս մարդը, ահա
 հայրապետական լանջախաչ մը
 եկաւ վարձատրելու իր բարեք
 ծառայութիւնը: Ո՞վ վկայեց անոր
 համար:

Կրօն. Ժողովը վերջերս կար-
 գազուրկ կընէ Աթանաս մը. որ
 այնքան ծանօթ է Պուլկարահա-
 յերուս, ամէնքա ալ ծափահարե-
 ցինք Կրօնականի այս եղական ու
 կտրուկ ընթացքը, բայց այսօր
 Պուլկարայի մէջ կը գտնուին մար-
 դիկ որ զանի պաշտպանելու կել-
 ւեն, թերեւս մտածելով որ այդ
 մարդը կին ունի, դաւակ ունի,
 պէտք է ապրեցնէ:

Բայց եկեղեցիին շահէ՞րը, գոնէ
 մեր հանդատութիւնը:

Եւ ո՞վ է ասոնց մէջ մեղաւորը.
 ինք ժողովուրդը, որ ինչպէս շատ
 անգամ չը գիտեր արժանաւորը
 վարձատրել, չի տար նաեւ պէտք
 եղած պատիժը անարժաններուն:

Աւելորդ յոգնութիւն մը, սխալ
 ճամբայ մը առած պիտի ըլլանք
 աշխատելով որ մեր հոգեւորա-
 կանութիւնը վերանորոգենք, բա-
 րելաւ ենք վարդապետներու պատ-
 ուատու մովը:

Նախապէս անհրաժեշտ է կտրել
 նետել բոլոր սպականած ու փրտ-
 տած մասերը, և այդ ժողովուրդը
 պէտք է ընէ:

Ձեռք ըսեր թէ յախուռն ըլլանք,
 և ամէն խօսքի, ամէն բարձա-
 սանքի ահանջ կախելով առանց
 մտիկ ընելու, առանց քննելու
 գատենք գատապարտենք մէկը.
 Բայց ինչո՞ւ ջանանք պարակելու
 գոնէ արեւի պէս յայտնի մեր-
 կութիւնները, ինչպէս կընէ Փի-

լիպէի մուսան կորսնցուցած բա-
 նասեղծը:

Ոճրազորքի մը չենք խնայեր
 իր աղուոր հասակին, անուշ ձայ-
 նին և կամ ընտանիքին համար,
 ինչո՞ւ յանցապարտ եկեղեցակա-
 նին համար ալ նոյն ուղղութիւնը
 չի բռնենք: Եթէ ակնածողներ
 կան անոր կարգին ու օժուովին,
 անոնք արդէն սրբապղծուած են
 իրենց ձեռքով, և մենք պար-
 տաւոր չենք անարժանին առջեւ
 գլուխ ծռելու:

Եւ երբ ժողովուրդը ինք աւելի
 խիստ կերպով կը վերաբերի իր
 եկեղեցականի արարքներուն, այն
 ատեն Սինոդ մը և կամ Կրօնա-
 կան Ժողով մը ստիպուած իր
 ձեռքը կունենայ միշտ խարազան
 մը եկեղեցիէն դարս ընելու բո-
 լոր գողերն ու վախճանուները,
 որ միակ միջոցն է մեր եկեղե-
 ցին մաքրելու:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՋՈՒՐ ՊՂՏՈՐՈՂԸ

Մանր, փորձանքաշատ բոպէ-
 ների մէջ է մեր հասարակական
 կեանքը: 80 թւականներից դէս
 ամէնքին այրող ոգեւորութիւնն
 ընկել, թուրացել է: Հասարա-
 կական միտքն ու արամագրու-
 թիւնը կասկածների ու անորո-
 շութեան մէջ ծխում է:

Հաւասար է երէկայ գաղափար-
 ներին, ձգտել երէկեան փայլա-
 յած ցանկութիւնների իրակա-
 նացման... պաշտօնը երէկեան
 սուրբերը: Այս մաշող հարցերը
 ծանր քարի պէս ճնշում են հա-
 սարակութեան միտքն ու խիղճը:

Յոռեւտեւ մ. քերք գերակշռող
 գիրք են բռնում: Ամէնասուրբ
 ձգտումներն ու ազգային իտէալ-
 ները, գործնականի մէջ դժու-
 րութիւնների հանդիպելով չեն
 կարողանում այլեւս անկեղծ ու
 լիառատ ոգեւորութիւն ծնեցնել
 հասարակութեան մի մասի մէջ:
 Մարդիկ այդպիսի վարկեաննե-
 րում համանում են ոչխարների,
 որ պատրաստ են վաղել ամէն մի
 հանդիպողի ետեւից:

Իսկ վարանումների այդ վար-
 կեանքներում խիստ շատ են խա-

չազող առաջնորդները, որ պատ-
 րաստ են օղակելու հասարակու-
 թեան յոռեւտեւ մաքրելից ու
 զգացմունքներից... պատրաստ
 են փառաբանելու ամէն ստորու-
 թիւն: Ձու պղտորողներ շա՛տ:

Այդպիսի մի սրտ թիպ ծնել
 է արդէն հայերիս մէջ եւ ազմուկ
 է հանում: Նայեցէք չորս կող-
 մերը—նրանք ամէն տեղ կան
 վխտում են ամէն մի միջավայ-
 րում:

Այդ նոր տիպը ոտի տակ է առ-
 նում այն կուռքերը, որոնց ա-
 ռաջ գեռ երէկ ծուներ էր դնում.
 նա հայհոյում է ամէն սրբութիւն,
 ամէն վեհ գաղափար. նրա համար
 սուտ խօսելը, ուրիշ խօսքերը
 յեղաշրջելը քաջագործութիւն
 է: Ձու նենալով ոչ մի էական
 համոզում, այդ հրէշները միեւ-
 նոյն թերթում, միեւնոյն յօդ-
 ւածի մէջ իսկ պատրաստ են
 ամէն տեսակ յիմար հակասու-
 թիւններ թոյլ տալ... Հակա-
 սութիւն... ի՞նչ փոյթ. պէտք
 է շոյել հայութեան այսուրան
 տրամագրութիւնը, ազմուկ հա-
 նել, ուշագրութիւն գրաւել:
 Եւ գրան հասնելու համար նրանց
 աչքում ամէն միջոց սուրբ է:

Այդ նոր տիպի կատարելալ
 մարմնացումն է Պ. Ա. Չոպանեան,
 որի «Նահիտ» 7րդ թիւում ե-
 ղած «Ներկան» խորագրով յօդ-
 ւածը ստիպեց ինձ գրել վեր-
 ցընել... Իսկապէս ես երբէք
 թոյլ չէի տալ ինձ Պ. Չ. ով զբաղ-
 ւել, եթէ նա մենակ լինէր:

Վարկեանները ծանր են: Այս
 սնափառութեան անմիտ հերոս-
 ները գանում են ուրիշ աղքատ
 ուղեղով մարդիկ, որ արտա-
 տրուում են նրանց յօդուածները,
 պաշտպանում, փառաբանում են
 նրանց... Ուրեմն Պ. Չ. մի տի-
 պի ներկայացուցիչ է, գրա հա-
 մար էլ մենք կաշխատինք մօ-
 տիկից նայել նրա «Ներկան»
 յօդուածի վրայ. քննել, խօսել
 նրա առթիւ և ապա պարզել մեր
 հայեացքը ազգային գործի ամ-
 բողջութեան մասին:

Ըօղւածի մէջ առաջին տի-

նարկից իսկ մենք տեսնում ենք Պ. Չ. ի գլխի խառնաշփոթ վիճակը:

Ազգրում նա մի երկար ուղիով նկարագրում է մեր երկրի ներկայի շատ իրաւացի սեւ գոյններով և աւելացնում. «Ե տիրութեամբ կը յիշեմ խանդի ու հաւատքի բոլոր ուր... մղուեցայ կարծել թէ... պիտի յաջողէր (հայ) ցեղին կեանքը վերանորոգել...» բայց «հիմայ» բոլոր շարիքները կը միանան, բնութեան ու մարդոց դաւերը կը գործակցին մեզի դէմ»:

Այս քաղաքից արեւի պէս պարզ է, որ Պ. Չ. յոռետես, յուսահատուած մարդ է. որ, նրա կարծիքով, հայ ցեղի կեանքն այլեւս անհնար է վերանորոգել:

Բայց արի տես, որ Պ. Չ. ուղեղը մշուշ է, որի մէջ հատուկոր գաղափարները նստած են՝ սրած այս ու այն անկիւնում, առանց իրար գոյութիւնը գիտնալու:

Յօդածի վերջում, քաղելով Չիպրիանի խօսքերը, Պ. Չ. յայտարարում է, որ հայերիս կեանքը «վերանորոգել կարելի է, միայն «խելացի կերպով ապրստամբութիւն մը պատրաստելու է»:

Այժմ հարց է ծագում. յուսահատ մարդ է արդեօք Չ., թէ հայի ապագայի վրայ դեռ եւս մի փոքր յոյս ունի:

Ո՛չ, Պ. Չ. հողմաղացի նման գրելը պտոյտ տալը քաջութիւն չէ. պէտք է գոնէ որ և է միտք մինչեւ վերջը, առանց հակասութիւնների՝ պաշտպանել, եթէ ոչ ամէն մարդ իրաւունքով կը կարծէ, որ որոշ գաղափար, որոշ ուղղութիւն չկայ ձեր գլխում, այլ միայն քամիներ են... փչում են ամէն ուղղութեամբ...»

Շարունակում եմ կարգալ Պ. Չ. յօդածը. «Ու Դրօշակի խմբագրութիւնը կառուցաւ իր կը դիմէ, որպէս զի մէկտեղ վան երթան, թերեւս սովամահներուն մէջ քանի մը պօմպ նետելու...»

Արիւնս պղտորում է. մի՞թէ մի ամբողջ խմբագրութիւն այնքան յիմար է, որ Դարբալիին հրաւիրում է վան գնալ... այն էլ «թերեւս քանի մը պօմպ նետելու սովամահներուն մէջ»:

Թերթում եմ բոլոր Դրօշակները: Միակ դիմումը որ գտնում եմ, դա 1899 թի 3րդ թւի մէջն է և ուրիշ ոչ մի տեղ: Կարգում եմ.

«Դրօշակի խմբագրութիւնը 27 մարտ թւակիր գրութեամբ մը դիմած էր Եւրոպական քանի մը յայտնի և հեղինակաւոր անձնու, խնդրելով անոնցմէ որ իրենց ձայնը բարձրացնեն հայկական խնդիրը քաղաքականութեան օրակարգն անցնելու, օգտակար զինամիութեան խորհրդածոյովին մօտալուս գումարումէն»:

Այդ առթիւ խմբագրութեան ստացած պատասխաններէն ստորեւ կը հրատարակենք հանրածանօթ Ռիչչիօթի Գարիբալդիի և Ամիլիար Չիպրիանիի նամակները»:

Այս է եղել դիմումի նպատակը և դրան էլ պատասխան ստացել է. ուրիշ ոչինչ, ոչ մի բառ, ոչ մի ակնարկ...»

Ի՞՞՞վ մարդկային անազնութիւն, ո՞վ սողունի ստորութիւն... ի՞նչպէս այսպիսի մի մաքուր, պարզ ու որոշ դիմում կարող եղար վերածել գէպի վան կոչող հրատարակչի և այն էլ «թերեւս սովամահներուն մէջ քանի մը պօմպ նետելու...» աւելի ցած, աւելի զղելի անուանարկութեան ակնարկով:

Գնացէ՛ք, Պ. Չօպանեան, գըր-

կախառնեցէք «Իգտամքի», «Մալիւնութի», «Բիւզանդիոնի» և այլ ստրուկ կեղծարարների հետ... Այդ միջոցով կարելի է նաեւ դեղին մետաղ ստանալ ձեր յօդածի սկզբում յիշած՝ «սով ու կոտորած կաղմակերպող Սեւ-Չեռքէն»... Մեծ մարդասպանի արիւնոս ձեռքից...»

Գրական կեղծարարութեան այս փայլուն նմուշը միակը չէ Պ. Չ. յօդածումը:

Շատ կան այդպիսի գոհարներ նրա մէջ ցրած:

«Ու Դրօշակը վեց պետութիւններուն կը զրկէ յայտարարակիր մը, որով կը սպառնայ այնպիսի խաղաղութիւնը տակնուվրայ ընել եթէ հայոց ուղածը չկատարեն...»

Եւ ահա ձեզ գրական կեղծարարութեան, ստոր խարդախութեան մի օրինակ եւս:

Դաշնակցութեան յայտարարը կարգացող ամէն մարդ, եթէ այսչ կամ զրպարտիչ չէ՝ պարզ կը հասկանայ, որ Դրօշակի խմբագրութիւնը չի «սպառնայ» տակնուվրայ ընել այնպիսի հիւսիսալիւծութիւնը եթէ հայոց ուղածը չկատարեն», այլ միայն յայտարարը յիշեցնում է մեծ պետութիւններին, որ եթէ հայոց հարցը բուրաբար լուծում չտանայ՝ Դաշնակցան սրի նման միշտ պէտք է սպառնայ Եւրոպական խաղաղութեան:

Մենք կարծում ենք, որ սա շատ պարզ է, եւ միայն Դրօշակը չէ այդ կարծիքը յայտնողը: Վերցրէք «Թանուր», վերցրէք նոյնիսկ Լահէի «Թակկալում» պաշտօնական թերթի այն յօդածը, որ թարգմանեցինք «Շարժումի» անցեալ թւի մէջ, վերցրէք գերմանական, զիցքերական կարեւոր թերթերը... Տեսէ՛ք, արդեօք նրանք էլ համարում են հայ և

մակեդոնական խնդիրներն իբր միջազգային խաղաղութեան սպառնացող հարցեր, թէ ոչ:

Երկուսից մէկը. կամ Պ. Չ. չը գիտէ այս ամէնը՝ որ բնաւ տգէտ է, և կամ գիտէ ու գիտակցօրէն կեղծում, ստոր պատտութիւն է յանձն առնում, գրգռած շուր պղտորելու վաս կրքից:

Ի հարկէ մենք համոզուած ենք, որ վերջին ենթագրութիւնն է ճիշդը:

Կեղծիքի կողմից Պ. Չ. խիստ հարուստ է: Դեռ սպասեցէ՛ք, այդ բոլորը չէ:

ԳԱՍՊԱՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօֆիա, 17 Մայիս
Սօպրանիի րաջուրը

Մայիս 16ին, առաւօտեան ժամը տասնուկէսին սեղի ունեցաւ Սօպրանիէի հանդիսաւոր բացումը:

Երկրի Իշխանը պալատականներու ուղեկցութեամբ և իր ձեռնար գունդերու ուրախական բացազանցութիւններու աղաղակներով հասաւ Սօպրանիէի առջև: Նախարարական մարմինը գլխաւորից զինքը ու ներս առաջնորդեց: Թագանօթի 21 որտները ողջունեցին Իշխանի զաւուսը:

Մտնաւոր կառքերով եկան նաեւ Իշխանի մայրը և Ֆիլիք եղբայրը:

Գահական ճառը հաշտեցնող և խաղաղարար ոգի մը կը պարունակէր:

Սօպրանիէի նիստերն սկսելու համար առժամայ նախագահ ընտրուեցաւ Տերունազարդ Յանքօքը: Մինչեւ այդ ժամը երկու կուսակցութիւններու ուժը անորոշուած է: Ստամպուլիստներու և Բասուլալիստներու մէջ ծագած անհամաձայնութիւնը հար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (5)

Ի. ՎԱԶՈՎ

ՊԵՆՏԵՆՏԻՆ

(ԻՐԱԿԱՆ ՎԷՊ ԸՍՅԴՈՒԿԻ ՄԸ ԿԵԱՆԻՔ)

Նայէ՛ն երկու փողոցէ անցնելով մտաւ երրորդը եւ մի դուռ բաղինց: Սաւար գիշեր էր. փողոցները ամայի, բակի մէջ երկու գամբոներ հաջեցին, նետուեցան դռան վրայ և ժանիքներով սկսան դուռը փերել: Բայց հաւատարիմ կենդանիները իսկոյն հանդարտեցան, հասկցան որ եկողը օտար մարդ չէր: Նայէ՛ն իր դռան սողուն էր:

Փոքրիկ աղջիկ մը դուռը բացաւ. ներս մտաւ, աղջիկը հօր ետեւէն դուռը կղզեց:

— Մարդ եկա՞ւ, հարցուց նայողէնը մեղմով:

— Ոչ ոք, հայրիկ:

Նայէ՛ն ուղղուեցաւ դէպի սենեակ մը, որուն թղթափակ լուսամուտներէն ազօտ լոյս կերեւան: Սեն-

եակը պարպ չէր: Կային չորս դիւղացիներ, ծալպատակ նստած և հրացանները առջեւնին: Ասոնցմէ մէկը իր յաղթանգամ կազմուածքով, լայն թիկունքով, ուժեղ կուրծքով, աչքի կը զարնէր. իր արեւակէզ ու քրտնախաշ գէմքը կը ցուցունէր որ տապիրու, ստոնամանիքի եւ բնութեան տարերքներու հետ մաքառող մտքը մըն էր: Աչքերը բոցավառ էին, բայց իր կամարածե ու նուրբ յոնքերը չէին համապատասխանը գէմքին խիստ ու կոշտ արտայայտութեանը: Միւս երեքը թէ եւ առջինի զօրաւոր մարմինը չունէին, բայց անոր նման ազատ էին եւ աւելի ժիր ու լուսավառ նայուածքներով: Մէկը բողբոջի անմօրուս, և անպիս էր, իր գէմքի գծերը պահած էին նրբութիւնը. նայուածքը աւելի քաղցր եւ մեղմ էր զարմանալի էր որ այս անմօրուսը հրացանը մէկդի գրած, իր գրկին մէջ երեխայ մը բռնած կը գզուէր, կը համարէր: Աւելի խանդակաթ մօր մը կը նմանէր քանթէ աւազակի:

Կարծեմ ընթերցողը հասկցաւ որ ասոնք Սլավոյի հրոսակային խմբին էին, մանկիկը գրկողը Վլադան,

անոր կինը: Հսկան ինքը Սլավոն էր. իսկ միւսները նոյնպէս պլավոցիներ:

Երբ նայողէնը ներս մտաւ, ամէնքն աչքերնին անոր վրա սեւեւեւեցին:

— Ինչ կայ, նայողէն, հարցուց Սլավոնը անհամբերութեամբ:

— Չուզեր:

— Ի՞նչ, չուզեր:

— Անի՞ծած սասանայ, ըսաւ նայողէն, իր սոսորակը մէկ կողմ նետելով:

— Մանրամասն պատմէ, ըսաւ վոյվոսան:

Նայողէնը մի առ մի պատմեց չօրպածի նետուի հետ ունեցած խօսակցութիւնը:

— Ա՛ն, կսպառնայ գլուխս ցանկապատին ցցել, մոլեղին նայուածքով մը հարցուց Սլավոնը:

Նայողէնը հաստատեց:

— Հիմակ ո՞ւր է այդ չուէր:

— Իր տունն է:

— Վլադան, ձգէ Վլադաքօն, չուս ամէնքդ ալ ոտքի ելէ՛ք, հրամայեց Սլավոնը: Ամէնքն ալ համաձայնեցան Սլավոյի այդ յանկարծակի որոշման և իսկոյն ոտքի ելան:

պատրաստ էին հետեւել իրենց հրամանատարին, ուր որ ուղէր ան:

Վլադան ալ իսկոյն երեխան մէկդի դրաւ:

Վլադաքօն լալազին թոթովեց:

— Մայրիկ, մայրիկ:

— Հոս կեցիր, ձագուկս. մայրիկդ հիմա պիտի վերադառնայ, ըսաւ Վլադան, հրացանը ուսը նետելով:

Վլադաքօն սկսաւ լալ եւ իր թաթիկները մօրը կրկնեցնել. մայրը ծոցեալ, պազաւ մանկան խաթ աչքերը եւ դուրս ելաւ. ընկերները իրենի կսպասէին:

Հոս քիչ մը խորհրդակցեցան:

«Մենք Սլավոնի տունն ենք պիտի ցատկենք», ըսաւ Սլավոնը, նայողէնին, որ նոյնպէս զինուած էր:

— Սթամբուլի տան պատիճրայէն, և այն խնձորենիէն ուղղակի նետուի բակը պիտի իջնանք:

— Ասա՛լ դուռն պիտի անցնիս, նայողէն:

— Այո, անոր չուէները զիս կը ճանչնան, ևս կը լոնցնեմ:

— Բայց կնկանը և երեխաներուն չը պիտի դպչինք:

— Միայն նետուին:

թուած է: Այս փաստը լաւ տպաւորութիւն թողոյց ժողովուրդին վրայ:

Կէս օրէն ետքը նիստը շարունակուեցաւ և ժողովի անուար մեծամասնութեան ձայնովը Սօսրուհիին նախագահ ընտրուեցաւ Պ. Վաչէվը (Քատուլալիստ):

Ընդգիծագիր կուսակցութիւնը ունի 61 ձայն, կառավարականը 87: Քսանեմէկ ձայնի առաւելութիւնը յաղթութիւնը կը դարձունէ կառավարութեան կողմը:

Պ. Ս.

հուլիս, 15 Մայիս

Հոս Խաղաղութեան Վեհաժողովը կը նկատուի իբրև ուսական Զարի մէկ ճարտարական շրջաններու մէջ այն համալուծը կը տիրէ թէ անարժէք մի ժողով է որ պիտի գումարուի, քանի որ ժողովոյ օրակարգը հիմնական և ոչ մի կէտ կը պարունակէ որոյ վրայ կարելի ըլլայ խաղաղութեան աղաւնին հանգչեցունել:

Այսուհանգերձ ամերիկացիին վհատիլ չը գիտեր, նախագահ Մաք Բիւրի շատ լըջօրէն կը վարուի դէպի ժողովը և կը ջանայ իրական արգիւնք մը ձեռք ձգել անկէ:

Ամերիկեան պատգամաւորները, որ այս ասիւնը գրած միջոցիս Լօնտօն կը գտնուին, իրենց հետ կը տանին շահեկան տաւալարկ մը, այն է՝ միջազգային հաշտարար դատարան մը ստեղծել, որ միջազգային վէճեր դատարանական սկզբունքով քննուին և վճռուին:

Հեռագիրը կը ծանուցանէ թէ ամերիկեան պատգամաւորները կար տեսակցութիւն մը ունեցած են անգլիական պատգամաւորներու հետ՝ հաշտարար դատարանի

մասին համաձայնութեան մը գալու գիտումով:

Յուսանք թէ երկու անգլիական անգլերը ժողովին բարի ելք մը պիտի տան:

Փիլիպեաններու խնդիրը մամուլի տաք վիճարանութեան առարկայ եղած է: Ժողովրդեան մեծ մասը հակառակ է կառավարութեան բռնած ընթացքին: Հարաւի նահանգներէն միոյն նահանգապետը բողոքագիր մը գրկած է Ուաշինկթըն քաղաք մէջ կրօնէ. «Իմ նահանգէս արդար գատի մը համար կուտելու կամաւորներ ելան, երբ կառավարութիւնը կոչ ըրաւ, բայց այժմ Քուպան ազատ է և այն նպատակը որուն համար կամաւորներ գրուեցան՝ իրագործուած: Բայց և այնպէս այդ հայրենաց հպատակ որդիք այսօր ստիպուած են ազատութեան ձգտող ժողովրդեան մը դէմ կուտիլ. բան մը որ հակառակ է մեր երկրի օրինաց և Սահմանադրութեան: Քանի որ իմ նահանգիս կամաւորներու ժամանակն ալ լրացած է՝ թողարտեցէք որ իրենց տուններ դառնան»: Նախագահական ընտրելի Ուիլիսմ ձէնիկի Բրայըն մեծ կակ գիրք մը հրատարակած է «Փիլիպեաններ և կայսերականութիւն» խորագրով: Գրքին մէջ կ'ըսուի լեզուով կը քարոտէ տիրող տարրը որ հասարակապետութեան մը սկզբունքները ստքի աակ առած՝ բռնապետութեան կը դիմէ:

Կառավարութիւնը ստիպուած տեղի կուտայ հասարակութեան ձայնին: Վերջին հեռագիրներէն կիմացուի թէ տեսակ մը ինքնօրինութիւն խոստացուած է Փիլիպեաններուն, Ամերիկայի գերիշխանութեան տակ:

Մովակալ ճօրձ Տուրի հրաման ստացած է Ամերիկա վերադառնալ. մօտերս պիտի մեկնի Փի-

լիպեաններէն: Ընդունելութեան մեծ պատրաստութիւններ կը տեսնուին: Նիւ Եօրքէն հեռագրաւ հաղկերոյթի հրատարակչին զինքը, սակայն ծովակալը մերժեց «առողջութիւնս հանդիստ կը պահանջէ» ըսելով: Պոսդանի մէջ ալ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին: Տուրի հոս եկած օրը ընդհանուր վաղանց պիտի ըլլայ, գործարաններ, խանութներ և նոյն իսկ պանդաներ պիտի գոցուին: Մեծ սրահի մը մէջ մէկ տուարնոց հաղկերոյթի մը պիտի տրուի ի պատիւ ծովակալին:

Հերոսապաշտ այս ազգը գիտէ պատուել իր գործիչը: Մանիլայի հերոսը ամէրիկացիի պաշտելին է այսօր առանց կուսակցական բաժանմունքի:

Երանի թէ մենք հայերս ալ ստիպելիք հերոսին հարկ եղած պատիւը տալ: Այդ տեսակէտէ շատ ետ մնացած ենք: Մեր մէջ քաջը կուսակցական ապրանք կը համարուի և ուստի՝ հակառակ կուսակցութիւնը թշնամական աչօք կը դիմէ զայն, շատ անգամ ալ... հայհոյանքի կարծանանան մեր հերոսները: Ե՞րբ պիտի մոխուրինք...

ԼԵՕ

Թաւրիկ, 30 Ապրիլ

Կենսոնական դպրոցի խնդիրը

Նախնական ընթացքներին արդէն յայտնի է, որ առաջնորդ Այլփառեան Սրբազանի ջանքերի նորհիւ պարտական համար մի կենսոնական դպրոց բաց անելու վերջնական կարգադրութիւնը եղել է: Գէտք է գիտնալ, որ այս բոլորովին տարբեր հիմնարկութիւն է Սայմաստում բացուելիք «Գիւղատնտեսական կենսոնական դպրոցի»:

Սայմաստում բացվելիք գիւղատնտեսական կենսոնական դպրոցը մի մասնաւոր հաստատութիւն կը

լինի Ատրպատականի վիճակի համար, կամ լաւ եւս է ստել, միայն Սայմաստի համար: Իսկ Թաւրիկում հաստատվելիք կենսոնական դպրոցը պատկանելու է ընդհանուր պարսկահայերին. նրա մէջ հաւասար իրաւունք պէտք է վայելի նա եւ թէհրան—Սպահանի վիճակը:

Սայմաստում բացվելիք կենսոնական դպրոցի նախնականը արդէն մասամբ ապահովուած է, որի մասին ուրիշներն արդէն գրել են: Իսկ Թաւրիկում բացվելիք ընդհանուր պարսկահայերի կենսոնական դպրոցի նախնականը դեռ չէ ապահովուած. գրտից գալիք փողերի վրայ են յոյս գրել: Թէ սրբան կաջողվի, այժմ մենք ոչ մի կարծիք չենք կարող յայտնել: Միայն նախնական ծախսերի համար «Թաւրիկի հայուհեաց բարեգործական ընկերութիւնը» իր ընդհանուր ժողովում որոշել էր նրա բացման նախաձեռնող հանդիսանալ 1000 թուաման նուիրելով: Սակայն, աժմ հաստատ ազդուրից իմացել ենք, որ կանանց ընկերութիւնը ուզում է այդ բացման մէջ մեծ փառասիրտութիւն ցոյց տալ, փող հաւաքելու համար ամբողջ ազգին կոչ անել յանուն կենսոնականի, եւ այլն, եւ այլն՝ ոսնակօխ անելով ընդհանուր պարսկահայերի անբռնարարի իրաւունքը:

Բնական էր, որ Սրբազան առաջնորդը դպրոցի ապագան ինկատուենալով, չէր կարող համաձայնվիլ կանանց ընկերութեան այս փառասիրտական ձգտում: Երբ հետ և և խընդիրն այժմ մնացել է այնտեղ, որտեղ էր արդէն չորս հինգ տարի առաջ. այսինքն՝ դպրոցի բացումը այս անհամաձայն պայմաններում անշուշտ պիտի յետաձգվի: Հետեւաբար, խնդրի մինչեւ վերջնական լուծում ստանալը, ես խորհուրդ կտայի, որ յանուն կենսոնական դպրոցի ուղարկվելիք նուէրները միայն առաջնորդ Սահակ կախկոպոս Այլփառեանի հասցէին ուղարկվելին, որովհետեւ կանանց ընկերութիւնը առ այժմ ձեռնպահ է մնում:

ՄԻՐՁՍ.

—)(—

- Ի՞նչ պիտի ընենք:
- Պիտի վերջացնենք:
- Ոչ, ոչ, չըլլար:
- Բայց ինչ պիտի ընենք:
- Նեաւ չօրպաճին, այդ վախատուն ինծի թողուցէք, ըսաւ Սլավչօ իշխանական ձեռով մը:
- Ինչ մըն ալ փոփոխելն վերջը խումբը դուրս ելաւ:
- Առջեւէն կերթար Սլավչօն Վլադաւային հետ, անոնց կը հետեւէին միւս երեքը: Միայն հինգ հոգիին ոտքի ձայնը կը լսուէր. և տաս վայրկեանէն արդէն Նեաւի շէնքին տակ էին: Նայդէնը արմուկը յենելով ընկերներէն միոյն, ճարտարութեամբ թուա Նեաւի բակը:

Առաւօտեան ամբողջ գիւղը աննշալիս յուզման մէջ էր: Լուր էր տարածուած որ աւազակները չօրպաճի Նեաւն քնած տեղէն առեր տարեր են լուր. ամէնքն ալ համոզուած էին որ ընողը Սլավչօն էր. և անկեղծօրէն կուրախանային որ Սլավչօն իրենց գիւղը ազատեց վախատուէն: Ընդձերք պատրաստ էին զոհեր մատուցանել քաջին համար, որը

օրհնած ձեռքերով պիտի վարձատրէր Նեաւին:

Գիւղացիները ճնշուած և խեղճուած էին Նեաւէն և հիմակ անոնց ուրախութեանը չափ չկար. և իրենց արիւնը ծծող այդ փոքրիկ բռնատուրը հուշար էր, քրիստոնեայ և իրենց հղալարը: Բայց իրենց չօրպաճին էր: Մերուներինը և Գիւղի երիտասարդները կ'զգուցանէին, ըսելով որ իրենք թուրքի բռնութեան, սովալուրէկ զապթիւնները նորէն պիտի մանային հոն հարցաքննուլու, ձերբակալու և կեղեքելու ամբողջ գիւղը...

Խառնաշփոթութիւնը և ստեղծուած հետզհետէ գիւղին մէջ կաւելնար. յուզումը աւելի սասակացաւ, երբ իմացուեցաւ որ Սլավչօն գիւղը գիւղն է եղած և ան է չօրպաճի Նեաւն փախցնողը:

Գիւղացոց ոգեւորութիւնը իր գագաթնակէտին պիտի հասնէր, եթէ թուրք կառավարութեան կեղեքումներու վախը չըլլար: Գիւղին ծայրը, Ակօթայի ափերու քով, թաղուած մեծ քար մը գտած էին, տակը խոր փոս մը, հողի վրայ քանի մը մէճիաներ և ոսկիներ...

հասկցուեցաւ որ Վլախի գանձը հոս էր եղած, և այս գիշեր Սլավչօն էր հանած:

Չօրպաճի Նեաւի անէն ողբի ձիւեր կը լսուէին. այդ քունը կողբար, բայց ամբողջ գիւղին առեւերը ուրախութեան մէջ էին: Սլավչօի ձեռքն իշխալէ վերջը, ալ Նեաւն կենդանի չի միար կսէին գիւղացիները իրարու:

— Աստուած ոյժ ու կարողութիւն տայ Սլավչօի նման կարիճներուն. Աստուած միշտ ազատ պահէ զանի թուրքի գնդակէն. կեցցէ քաջը, վարպետ է կղեր:

Ուրիշներ ալ կըսէին. — Ճիշտ որ Նեաւն դազան էր և անգուլթ. լաւ է որ Սլավչօն այդ ձիւազը մեր գիւղէն վերցնէ, քան սաս թուրք ոչնչացնէ:

— Եթէ այս չօրպաճիները չըլլային, մենք մինչեւ հիմա ազատ պիտի ըլլայինք: Այդ անխիղճները մեր արիւնը ձեռքէ գատ, ուրիշներուն զմեզ կեղեքել կուտան:

— Երանի այն մօրը որ Սլավչօի նման հայդուկ մը ծնած է: և և հազար փոսք իրեն, որ մեր գիւղը այդ հրէշն ազատեց:

Նեաւի զօրազուլութիւնը առիթ կուտար խեղճ գիւղացիներուն, իրենց կրած տառապանքի և հարստահարութեանց փոխարէն, աչնէճքի ու հայհոյանքի տարափ տեղացնել վախատուի գլխուն, իսկ միւս կողմէն անկեղծ բարեմաղթութիւններ իրենց հերոսին:

Բաւական ժամանակ անցած էր Նեաւի անհետանալու օրէն, բայց ոչ սք գիւղեր անտր ուր ըլլալը և ինչ ըլլալը:

Գիւղի ասնուտէրը իսկայն կատու վարութեանը իմացուց Նեաւի յանկարծակի աներեւոյթանալու մասին: Կառավարութիւնը զապթիւններ զբրկեց որոնք քննեցին, խուզարկեցին և իրենց պաշտօնին պահանջած սմէն գործողութիւնները կատարելն վերջը... Նեաւին չկրցան գտնալ, ոչ գիւղին մէջ և ոչ չրջակաները:

— Քոստո կեաւութիւն համար չարժեր միւր աշխատանքը, կըսէին թուրքերը:

Սլավչօի անունը արդէն աճաբեկած էր իրենց. ալ ինչ սիրտ ու քաջութիւն պիտի ունենային Նեաւն փնտռելու:

Թաւրիկ, Պ. ՍԻՐԻՍԻՍԵԱՆ

ՎԱՆՅՑ ՀԱՅԴՈՒԿՆԵՐԸ

Չորեքշաբթի գիշեր տեղի ունեցաւ Վանայ սովիոց օգտին «Վանայ հայ-յուզկներ» բիւի ներկայացումը :

Խաղը սիրուն եւ կենդանի անցաւ : Դափաճարութիւնները եւ ժողովրդի սրտի խորհրդէն զուրս թոսած անկեղծ կեցցէները անվերջ, անխիւ էին :

Սիրող երիտասարդներէն ասկէ աւելի լաւ խաղ չէր կարելի սպասել : Բնմի արդ ու զարդը եւ տեսարանները, չնայելով թատրոնի ծայր աղքատութեան, պատրաստուած էին շատ յաջող ու ճաշակաւոր :

Ներկայացման սրահը լեցուն էր : Յաճախողները միջին եւ աղքատ դասակարգերն էին շոջ-աղաներու կատարեալ բացակայութիւնը կը տիրէր. նմուշի համար գէթ մէկ հոգի չէր եկած . . .

Տ. Գալէմճեանի գրութիւնը, ընդհանրապէս խօսելով՝ բաւական բեմական է. գործողութիւնները կենդանի, բազմակողմանի ու հետաքրքրի են : Դիտողը չի քննարկ, այլ լարուած ուշադրութիւնով կը հետեւի խաղին : Եթէ հեղինակը աշխատի քիչ մը պակասեցնել բեմի վրայի աւելորդ հրացանաձգութիւնները եւ միայն մէկ կամ երկու կտոր թողնէ՝ բիւսը կը շահի զեղեցկութեան կողմէ :

Բեմը, քնչպէս կերելի, անձանօթ չէ Պ. Գալէմճեանի : Իսկ գրութեան գրական կողմը տկար է. անմիտ ու թույլ արտայայտութիւններ, անիմաստ նախադասութիւններու կոյտեր . . . եւ այս ամէնը՝ իբր թէ կենդանի խօսքի ոյժը աւելցնելու համար : Վերջապէս «չո՛ւն» բառի անվերջ կրկնութիւնը, որ վայել չէ «ճաշակն ու բարոյականը կրթելու» կոչուած բեմին համար . . .

Բիւի գործողներէն էն յաջող կերպարանքը Տէր Կոմիտասն է, հայ հոգեւորականութեան փառաւոր նմուշը : Հեղինակը լաւ ծանօթ է այդ միջավայրին : Միւս հերոսները շատ մշակութեան ու փորձ գրչի կարօտ են :

Ինչ ալ որ ըսենք՝ այնուամենայնիւ «Վանայ հայրուկները» հազար անգամ աւելի հետքաքաշարժ է, քան կեղծ ու փտտած Արշակները՝ Վանաները, Երուանդները կամ Կոռնակները : Անցածն անցեր է. կեանքը կուզէ ժամանակակից, այրող խնդիրներ, հոգեթոթիո հարցեր : Պ. Գալէմճեանի գրութիւնը, չնայելով բազմաթիւ թերութեանց, օրուայ հարցը ամէնուս համար պաշտելի ու բաղձալի խնդիրն է :

Բիւսը, դժուար չէ գուշակելը, պիտի դառնայ մեր նորագոյն բեմի սիրելի խաղերէն մէկը, եթէ քիչ մը աւելի մշակուի ու կրճատուի :

Տէր Կոմիտասի կուրանալը, անոր ճառը ոսկիի գերի մասին, անոր զղջալու եւ նորէն ըմբոստանալու փորձը՝ մեր կարծիքով, աւելորդ բեռ մըն է. որ կը փչացնէ բիւիին ամբողջ ոյժն ու սիրուն տպաւորութիւնը : Այդ ամբողջ տեսարանը, չեքսքիրեան ուրուականներու ծաղրանկարներով պէտք է նետել :

Մէկ խօսքով, հեղինակը լաւ է գտեր հասարակութիւնը գրաւելու ջիղը, ատկէ ամուր բռնելու է, այդ հարցի շուրջը գտնալու է աւելի յաճախ :

Գ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Երեւանի նահանգի քանի մը մասերու մէջ անձրեւներու խիստ պակասութիւն կը զգացուի : Էջմիածնի գաւառի արտերը կը չորնան, սպառնալով հացի գիւնեքու սղութիւն : Դժբաղդութեան րոպէներու մէջ ժողովուրդը կը դիմէ նախապաշարութեան : Հոգեւորականութիւնն ալ կաշխատի օգուտ քաղել այդ ախտէն : Էջմիածնեցիք, վարդապետով մէկ տեղ, գացեր Ս. Յակոբայ աղբւրէն շուր եւ բերեր որ անձրեւ գայ . . . Աս ալ մեր կրթութեան հոգեւորականութիւնը :

— Պարուի մէջ լեռնական դպրոց մը բանալու ծրագիր կը մշակուի : Նախադրուաններուց ընդ 13րդ ժողովը արգէն 10,000 ռուպլի յատկացուցեր է. կը մնայ որ կառավարութիւնը թոյլ տայ դպրոցը բանալու :

— Գերմանական թերթերու մէջ բաւական ատենէ ի վեր սուր վէճ մը բացուած է. թրքաէր թերթերը (Գէօրնիչէ Չայթունկ) դէմ են «Հայ կարօտեալներուն օգնող կոմիտէի» գործունէութեան, ըսելով որ Գերմանիոյ մէջ ալ շատ կարօտեալներ կան : Իսկ շատ մը ուրիշ թերթեր ատոր հակառակը կը պնդեն թէ հայերուն օգնելու գործը ընդ քիչ բարեգործութեան չը խանգարեր :

1896է մինչեւ այս տարուան սկիզբը Գերմանիոյ մէջ հաւաքուած է հայերու համար 1,800,000 մարք, այժմ ալ տարեկան 350,000 մարքի չափ կը հաւաքուի եւ կը գործադրուի :

— Թիֆլիզի երկրորդ կարգի վաճառական Գիրգիլեան մեռնելով՝ իր բաղմարժէք տունը կտակեր է քաղաքին, որպէս զի անոր եկամտով հայ-լուսաւորչական օրգեգիրներ պահուին : Հանգուցեալը կտակեր է նաեւ հետեւեալ գումարները. 500 ռուպլ. Ներսիսեան դպրոցին, 500 արհեստագիտական դպրոցին, 500 ռուպլի Վերայի հայոց եկեղեցիին, 600 ռուպլի երկու ծխական դպրոցներու եւ 500 ալ վարչաւ քաղաքի կօշիկներու գործարանի մը՝ ձեր եւ կարօտ բանուորներուն բաժնելու համար :

— Գրիգոր Արծրունիի միակ ղրորը՝ Բարօնուհի Եղիսաբէթը՝ ապրիլ 3ին մեռաւ Օտեսաի մէջ :

— Մշակի Վանայ թղթակցի ըսելով տեղոյն կուսակալը արդարաւէր մարդ մըն է : Վերջին ատեններս ձերբակալել եւ բանտարկել է տուեր յայտնի Լմիր Օնպաշի աւաղակ օճրագործը, քուրդ Շէրիֆ պէյը եւ թամուր օղլու Ալի պէյը, որ թուրք ու հայ գիւղերու գլուխին կատարեալ փորձանք մըն էր դարձած : Կուսակալի կաշառակեր պաշտօնակիցները դժգոհ են անոր արդարասիրութենէն եւ դիմած են Պօլիս զայն հեռացնելու համար :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼԱՀԷՑԻ ԺՈՂՈՎԻ ՇՈՒՐՁԸ. — Պեռլինի «Ռայխսպոստ» իր 124 թիւին մէջ, առնելով թրքաէր «Բօլլեթիչէ Գօրէսթօնտէնձնէ» կը հաղորդէ. «Հայ ժողովրդի պատուիրակի ջանքերը զբաղեցնել ժողովի անդամներու ուշադրութիւնը հայերու թշուառութիւններով՝ ամբողջապէս անյաջողութեան հանդիպեցաւ : Պետութիւններու պատուիրակները չուղեցին ընդունել հայերու մասնակցութիւնը, եւ նախագահն ալ մերժեց անոնց յայտագրին ու եւ պաշտօնական կերպարանք տալով՝ ժողովի զբաղման նիւթ չի ներկի :

Ժողովի անդամները փոփոխով ստացան «Թուրքիոյ ազատական կուսակցութեան կեդրոնական կոմիտէի» ընտրելի թերթը, բայց ամէնեւին կարեւորութիւն չը տուին :

— «Հաւաստի» գործակալը կը հաղորդէ եւրոպական կարեւոր պատուիրակի մը հետեւեալ խօսքը. «Մենք ստացեր ենք բազմաթիւ Հայ, Մակեդոնական եւ այլ մասնաժողովներէ խնդրագրեր : Մենք չենք կարող անոնց մասին խորհրդակցել, որովհետեւ ամէն պատուիրակ հրաման ստացեր է դուրս չելլալ Մուրավիէֆի շրջաբերականին մէջ զձեռն ծրագրէն : Ատոր պատճառն այն է, որ մենք Պեռլինի 78 թիւի ժողովի նման Վեհաժողով մը չենք, որ աշխարհի քարտէսը փոխելու կոչուած ըլլանք : այլ խիստ որոշ ծրագրով կալմուած խորհուրդ մը : Սակայն ժողովը որոշեր է ընտրել մասնաժողով մը որ ընդունէ դուրսէն եկած ամէն տեսակ ծրագիրներ, խորհուրդներ եւ խնդիրներ : բայց ատիկա չկրնար փոխել ժողովին որոշ ու անխախտ ծրագրերը :

— «Անգլիական եւ արտասահմանեան միջազգային միջնորդ դատարանի ընկերութեան» անդամները Լահէյ եկած էին յայտադիր մը տալու ժողովին միջնորդ դատարանի մասին : Յայտադիրը տուին եւ ամէնու կողմէ շատ սերալիբ ու լաւ ընդունելութեան արժանացան :

— Լահէյի քաղաքային վարչութիւնը ժողովի անդամներու համար նուազահանգէս մը տուած է :

ԿԸ ՓՆՏՈՒՄ

Չմշակածագի Երեց Ապարակ գիւղէն Մկրտիչ Առաքէլեան. գաղթականութեան ժամանակ Պուրկարիա գալով կորսուած է. ուստի կը խնդրուի տեղեկութիւն ունեցողներէ ողջ կամ մեռած լինելը հաճին իմաց տալ խմբագրութեանս :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՌՈՒՍՉՈՒՔ. Պ. Ս. Գ. Ին. — Ձեր առաջարկը եւ մասնաւոր պայմանները չափազանց ծիծաղելի են : Այդ ձեռով, խորհուրդ կուսանք դիմել ուրէ զաւելջնակաւ թերթի. թերեւս ընդունի . . .

ՍՕՅԻՍ. Թաղական խորհրդին. — Ձեր պաշտօնական հերքումը չենք կարող տպագրել : Ինչ կը նշանակէ կնիքով կնքուած թուղթի մը մէջ հայտնութիւն թափել թղթակցի մը գրուելին . . .

ՊԼՕՎԷՇՏ (Ռուսաւիտ) Պ. Նշան Ոսկան. — 12 ֆր. ստացանք, թերթ սկսեցինք զրկել : Գարթով մը պարզ հասցէնիդ զրկեցէք :

ՆՈՒԱԳԱՀԱՆՆԵՒՄ Ի ՆՊՍՍ

«Սաէտինէնիէ»ի սրահին մէջ. Մայիս 26, չորեքշաբթի երեկոյ ժամը ութուկէսին, Դաշնակ, ջութակ, երգ, հայերէն եւ պուրկարերէն մենախօսութիւններ : Կը մասնակցին. Տ. Ալպանօ, Օր. Օր. Ամիրխանեան, Ղօնչէկիլեան, Քիւրքեան, Տէֆիրճեան, Կարապետօֆ. և Պ. Պ. Ն. Ամիրխանեան. Գրիսթօֆ, Բոայքօֆ և Գալֆայեան :

ՎԱՐԴՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ (ՀԱՅ ՅԵՂԱՔՈՒՍԱՆԱՆ ԿԵԱՆՔԻՑ) (Գիւն 1 Յրանգ) Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը :

ԱԶԳ

Հայ հասուն երիտասարդ մը որ գիտէ հաշուապահութիւն, ծանօթ է սաճկերէն եւ գաղղիերէն գրականութեան, կուզէ պաշտօն ստանձնել վաճառատան մը մէջ դիւրամատչելի վարձատրութեամբ, կը համաձայնի նաեւ պարզ գործակատար ըլլալ : Դիմել խմբագրութեանս :

ՊՕՐՍԱ

Վառնա 22 Մայիս ՊՈՒՂՏԱՅ Վակօն, լիպրա 55—58, հէքթօլ. 9.50—11 ֆրանք Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 10.20—12 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 հէքթօլ. 7—7.10 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վակօն, 55—57 լիպրա, 6.10—6.20 Առապա, 55—60 լիպրա, 6.40—6.50 Կիւնտէ 10—12 վակօն, 8—10 առապա կէլմէքաէ սիր : Առապա մուսուլմանի նարօլէն 21 ֆրանք հիսապը էլէ սիր :

Отговорникъ: А. СУКЯСОВЪ Печатница „Взаимность“ Варна.